



Մամլո հաղորդագրություն

Հայ-բրիտանական առևտրաարդյունաբերական պալատի բացում

31 / 03 / 2010 -ին Հայ -Բրիտանական Միությունը կներկայանա ՁԼՄ-ներին իր նոր նախաձեռնությամբ՝ Հայ - բրիտանական առևտրաարդյունաբերական պալատի բացմամբ: Մամլո ասուլիսը տեղի կունենա ժամը 12:00, Էրեբունի Պլազա Հյուրանոցում:

ABC-ն շահույթ չհետապնդող, ոչ առևտրային կազմակերպության հասարակական միավորման տեսակ է, որում իրենց շահերի ընդհանրության հիման վրա միավորվել են ուսանողներ, շրջանավարտներ և արհեստավարժ մասնագետներ: ABC-ի անդամակցությունը հիմնականում բաղկացած է Միացյալ Թագավորությունում կրթություն և աշխատանքային փորձ ստացած մարդկանցից:

Կազմակերպության նպատակն է նպաստել Հայաստանի Հանրապետության և Միացյալ Թագավորության հարաբերությունների ամրապնդմանը՝ հետևյալ ոլորտներում.

- կրթական ոլորտում համագործակցություն
- մշակութային կապերի ամրապնդում
- ֆինանսական ինտեգրում
- տնտեսական համագործակցություն
- քաղաքացիական հասարակությունների համագործակցություն

Վերոնշյալ նպատակներին հասնելու համար ABC պլանավորում և իրականացնում է տարբեր ծրագրեր: Ներկայումս իրականացման փուլում գտնվող ծրագրերից են Հայ-բրիտանական առևտրաարդյունաբերական պալատի ստեղծումը Երևանում և Լոնդոնում: Այսօր մենք կարևորում ենք Մեծ Բրիտանիայի գործարարների ներգրավվածությունը և հետագա ներդրումները հայկական տարբեր ինդուստրիաներում: Այսպիսով, որպեսզի խթանենք այդ գործարար կապը և ստեղծենք բազմաֆունկցիոնալ հաղորդակցման եզրեր, ինչպես նաև գործարար պլատֆորմ այդ երկու երկրների միջև մենք նախաձեռնեցինք Հայ-բրիտանական առևտրաարդյունաբերական պալատի (ABCC) ստեղծման գործընթացը:

Լրացուցիչ տեղեկությունների համար պալատի կամ մամլո ասուլիսի վերաբերյալ կարող եք դիմել Արմինե Իսրայելյանին: Հեռ; 091 42 08 29, էլ-փոստ a.israyelyan@abconnect.am:

ABC –ի ներկայումս ընթացող ծրագրերից են “Ռոբերտ Բըրնսի” երիտասարդական կենտրոնի ստեղծումն ու գործունեությունը “Չատիկ” մանկատանը,



“Գլոբալ Բրիջ” ուսումնական կենտրոնը և կրթական-խորհրդատվական կազմակերպությունը, Մեծ Բրիտանիայում կրթական հաստատությունների շրջանավարտների միությունը, Օքսֆորդ և Քեմբրիջ ակումբը երևանում, մի շարք բիզնես պլանների նախագծումը և բարձրակարգ որակավորումներ ունեցող մասնագետների ցանցի ձևավորումը:

Միաժամանակ, ABC-ն կազմակերպում և մասնակցում է այնպիսի ծրագրերի իրագործմանը, որոնք ուղղված են նպաստելու կրթական համակարգի զարգացմանը և աջակցում են տաղանդավոր երեխաներին իրենց ուսումը շարունակելու հանրապետության և օտարերկրյա ուսումնական հաստատություններում:

Կազմակերպությունը խթանում և օժանդակում է իր անդամների կրթական և մասնագիտական գործունեությանը, նպաստում է նրանց որակավորման բարձրացման հնարավորությունների ընդլայնմանը, օժանդակում է անդամների կողմից ինքնուրույն կրթական, գիտական, ուսումնական ծրագրերի մշակմանն ու իրականացմանը:

Որպեսզի ABC-ն իրականացնի անհրաժեշտ ծրագրերը, կազմակերպությունը կիրառում է կորպորատիվ կառավարման այնպիսի համակարգ, որը համապատասխանում է միջազգային լավագույն փորձին: Պատասխանատվությունը, թափանցիկությունը, արդյունավետությունը և կառուցողական մտածելակերպը այն հիմնական սկզբունքներն են, որոնք հիմք են հանդիսանում ABC-ի առօրյա գործունեության համար:

Հարկ է նշել նաև, որ կազմակերպությունը ապաքաղաքական կառույց է և չի հետապնդում քաղաքական նպատակներ: Միաժամանակ բոլոր ծրագրերի և միջոցառումների նախագծման փուլում միշտ հաշվի են առնվում հետևյալ չափորոշիչները՝ 1) արդյոք նախաձեռնությունը կնպաստի անդամների մասնագիտական և կրթական զարգացմանը, 2) արդյոք դա կնպաստի ABC-ի նպատակների իրականացմանը, և ամենակարևորը 3) արդյոք դա կնպաստի Հայաստանի Հանրապետության տարրադրույթ զարգացմանը, քանի որ վերջինս Կազմակերպության գերագույն նպատակն է:

Հավելյալ տեղեկությունների համար խնդրում ենք այցելել մեր պաշտոնական ինտերնետային կայքը՝ www.abconnect.am: